

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 43/4

ք.Երևան

20 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ՝ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 08.06.2018թ. N4102133 ակտի դեմ «ԼԻ ՏՈՒՆ» ՍՊԸ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

«ԼԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից դիմում-բողոք է բերվել ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 08.06.2018թ. N4102133 ակտի դեմ:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը ներկայացնող հարկ վճարողը նույն պահանջով դիմել է դատարան:

Քննարկվող դեպքում «ԼԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 08.06.2018թ. N4102133 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի 27.06.2018թ. որոշման համաձայն հայցադիմումն ընդունվել է վարույթ (վարչական գործ թիվ ՎԴ/6985/05/18):

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ԼԻ ՏՈՒՆ» ՍՊԸ դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ

